



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

632.7  
S - 37

7484

# ՄԱՐԵՒԹԻՒ



2002

2011

Տ

5

«ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ԳՐԱՅԵՐԻ ՀՐԱՄԱՆԱԿՈՂՈԹԵԱՆ»

# Մ Ա Ր Ե Ւ

ԵՒ

ՆՈՐԱՆ ԶՆԶԵԼՈՒ ՀՆԱՐՆԵՐԸ

Առաջնա ՅԵ ՃԵՆԻՓԻ ՅՈՒ ՌԵՊԼԱՆ ՕՆԱ ՀՈԼ  
ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՀՐԱՋԵԱՅ ՏԵՐ-ԲԱՐՄԵՎԱՆՅԻ



ԹԻՖԼԻՍ

ԱԱՐՏԻՐՈՒՄԵԱՅ ՏՊԱՐԱՆՈՒՄ

18

80

16957-42

III

ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

卷之三

Дозволено цензурою. Тифлисъ, 29 апРѣля 1880 г.



Типографія І. Мартиросянца, на Орб. ул. д. № 5.

Գլուխ աշխարհում կատարելու առաջնային գործընթացը կազմության վեհական է և պատճենահանության առաջնային գործընթացը կազմության վեհական է:

## ՅԵՒՅ.ՔԵՐԵՎ

**ՕԵԿՈՒՑՈՒԹԻՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱԱՆԱԺՈՂՈՎԻ  
ԹԱՒՓԼԵՂԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՐԵՆ ՊՐՔԵՐԻ ՀՐԱ-  
ՅՈ ՆԵՐԻ (Այսուհետ ՄԱՐԱԿՈՒԹԵԱՆ: այլուսցու բառ ԱՅՀ  
ԱՅՀԱԿԻ ԾՂՐԱՎԱՐԻ ԴԱ ԱՅ ԿԴԱԿԱԿԻ ԱԿԱ ՐԱՅՈՒՆ)**

Ապրիլի 16-ին բժ. Ա. Բարյախանը վարչութեան կողմից ներկայացուց խմբագրական ժողովին մի տետրակ՝ «Մորեիս և նորան ջնջելու հնարիները» վերնագրով և հետեւեալ նամակը տետրակի հեղինակից: «Այս նամակիս հետ ուղարկում եմ մի տետրակ, որի մէջ նկարագրել եմ թէ մորեիների կեանքը և թէ այն միջոցները, որ գործ են ածվում նրանց ջնջելու համար: Կենսագրութեան մէջ մէջ ուշադրութիւն եմ դարձրել նրանց այն սովորութիւնների վերայ, որոնցից օգուտ կարելի է քաղել նրանց ջնջելու համար: Զնջելու եղանակներից նկարագրել եմ միայն այն միջոցները, որ գործ են դրուած զանազան տեղերում և որ մեր պրօֆէսօր յայտնի էնտոմոլոգ Վինդէմանը առաջարկում է, ինչպէս ամենալաւը և ներգործականը»:

«Բլոշիւրաս զրել եմ հետեւալ հեղինակութեանց առաջ-  
նորդութեամբ»:

1) «Naturgeschichte der werbellosen Thiere» von D-r Taschenberg. 2) „Руководство къ истреблению саранчи“, Пашинева, 1859, издано особымъ комитетомъ по

истреблении саранчи. 3) „О саранчѣ,“ соч. проф. Герштремера, пер. съ нѣмѣнскаго, дополненное по Кеппену и 4) „*վերջապէս մեր պրօֆէսօրի դասախօսութիւնքը այս նիւթի մասին:*“

«Եթէ բրոշերաս կ'գտնէք յարմար տպելու, կ'խնդրեմ ինձ ուղարկել մի քանի օրինակներ, 4-5 հատ: Մնումէ աւելացնել որ մտադիր եմ էլի պարագել միւնոյն ուղղութեամբ, մի քանի դրքոյների մէջ մոադիր եմ ծանօթացնել և հնար ցոյց տալ մաքառելու: այն ժժմակների (միջատների) դէմ, որ ամէնից շատ վնասաբեր են մեր երկրագործ դասին:»

Այս նամակի ընթերցումից յետոյ Պ. Բաբայեանը յայտնեց խմբագրական մասնաժողովին՝ հետևեալու. թէ ինքը նախապէս կարդալով ալ. Տէր-Բաբասեղեանի տետրակը՝ թէե հաւանել էր նորա լեզուին (սակաւ փոփոխութիւնք և սրբագրութիւն կ'պահանջուի) և նիւթի դասաւորութեան, սակայն իւր կարծիքը բաւական չ'համարելով դիմել էր գիւղական-անտեսագէտ Յ. Ս. Խատիսեանին այս տետրակի տպագրութեան կարեւորութիւնը որոշելու համար:

Պ. Յ. Խատիսեանը բարեհաջել էր հետևեալ կարծիքը յայտնել զրաւոր կերպով. «Ձեր ուղարկած գրուածը մորեխին մասին շատ հետաքրքրական կ'լինի այժմ, որովհետեւ մորեխը այս մօտերում սկսել է կրկին երեալ Անդրկովկասի գանազան տեղերում:»

Այս տետրակի հրատարակութեան մէջ, իմ կարծիքով, հարկաւոր կ'լինի փոքրիկ յաւելուած միայն անելու

«ինչպէս այս գրուածը, նոյնպէս և այլ սորտ նման Ռուսերէն և Նորուական գրուածները խօսում են սովորաբար իսկա-

կան՝ Եղիպատական կամ Արաբական մորեխի մասին (Acridium Migratorium), այն ինչ՝ մեր կողմերի այս վերջի քանի տարիքը մեզ վնասող մորեխը մի այլ դեռ լաւ չ'որոշած փոքրատեսակ մորեխ է, որ աւելի նման է Acridium Calliptamus կոչուածին:»

«Ահա՝ համառօտ խօսքով սոյա զանազանութիւնը, Եգիպտական մորեխը համեմատաբար աւելի մեծ է, աւելի շատակեր և վնասաբեր, ձուաներից գուրս գալուց մինչի թե առնելու ժամանակամիջոցը տեսում է  $1\frac{1}{2}$  մինչև 2 ամիս: Զուաներ գնում է աշունքին, իւրաքանչիւր մորեխի բնում (որ ժողովուրդը ուղղակի մորեխի ձու) լինում են մինչև 100 «հատիկներ» (որ իսկական ձուաներն են):»

«Մեր կողմերի այժմեան մորեխը շատ փոքր է Եղիպատականից կամ իսկական մորեխից, համեմատաբար սակաւ է կըտրում հաց, բայց աւելի շատ տեղափոխութիւնը է անում: Զուաներից գուրս գալուց մինչև թե առնելու միջոցը  $1-1\frac{1}{2}$  ամիս է, ձուաներ գնում է Մայիսին, Յունիսին և յետոյ կորչում է. ամէն մի բունի մէջ 25—35 ձուաներից աւելի չելինում: Որովհետեւ այս մեր մորեխի տեսակը ուրիշ տեղերում շատ հաղեւ է երեւում, ուստի նորա նկարագրութիւնը սակաւ մասնագէսների միայն յայտնի է: Այս պատճառով տետրակի մէջ նկարագրած անդամները մեծ վնասները վերաբերում են եղիպատականին և ոչ մեր այժմեան տեղական մորեխին, որը անշուշտ վնասաբեր է, բայց համեմատաբար սակաւ:»

«Թէ մեր այժմեան և թէ սովորական եղիպատական մորեխի ջնջելու եղանակները մի և նոյնն են. և այս տետրակի մէջ առաջարկած միջոցները շատ ուղեղ և լաւերն են ընտրուած:»

«Ուրեմն տեսրակը արժանի է տպագրութեան, միայն թէ պէտք է աւելացուի տետրակի մէջ նկարագրած և մեր այժմեան մորեխի վերոյիշեալ զանազանութիւնը։ Եթէ ցանկանայիք մանրամասն յաւելուած անել այժմեան մեր մորեխի մասին, առ կ'առաջարկէի ձեզ իմ ոռուսերէն յօդուածը այդ մասին՝ տպած տեղոյս Գիւղա—տնտեսական ընկերութեան անցեալ տարուայ հրատարակութիւններում։»

Այս տեղեկութիւնները ստանալուց յետոյ խմբագրական-մանաժողովը յանձնեց իւր մի այլ անդամին—պէտքականացագետնին, իբրև բնադէտի, կրկին վերահայել տետրակը և մասնաւոր ուշք գարձնել լեզուի և տետրակի մէջ գոյծածած ուսումնական բառերի ճշառութեան վրայ։

Պ. Նահապետեանը՝ ցոյց տալով տետրակի մէջ քանի մի սխաններ լեզուի կողմից, հետևեալ կարծիքը յայտնեց խմբագրական մանաժողովին։

«Մեծ բաւականութեամբ կարդացի ԱՄորեխ և նորան ջնջելու հնարները» վերնագրով յօդուածը և այնքան ժամանակակից եմ համարում այս հարցը, առաջարկած հնարները այնքան յարմար, որ ՚ի բոլոր սրտէ ցանկանում եմ այս յօդուածի օր առաջ տպագրութիւլ։»

«Յանկալի է աւելացնել այս տետրակին պ. Յովհաննէս Խատիսեանի նկարագրութիւնը, մեր տեղական մորեխի մասին, յիշելով լնթերցողներին, որ ոչնչացնելու միջոցները մի և նոյն են մնում մորեխի ամէն մի տեսակի համար։»

Պ. Բարայեանը ասաց որ եթէ ուշանայ պ. Խատիսեանի յօդուածի մանրամասն թարգմանութիւնը, որպէս զի տպագրութիւնը չ'յետաձուի՝ առ այժմ պէտք է բաւականանալ այն

տեղեկութիւններով, որ նա՝ պ. Խատիսեանը՝ յայտնել է իւր նամակի մէջ։ Այս բոլոր տեղեկութեանց հիման վրայ խմբագրական մանաժողովը որոշեց յանձնել առաջարկեալ տետրակը Ընկ. վարչութեանը օր առաջ տպելու համար, աւելացնելով տետրակին իբրև յառաջաբան մանաժողովի այս ղեկուցումը։

## ՅԵՒԵԼՈՒԾ Ծ

Այժմեան տեղեկութիւններից երեսումէ, որ մորեխը այս բոպէիս տարածուած է Գանձակի՝ Ղազախու (Շամշադու) և այլ այլ նահանգի գաւառներում, նոյնպէս Բագուայ նահանգի շատ տեղերում և այս ամսի 10-ից Թիֆլիզի նահանգում (Ղարայազ և այն), այս վերջի օրերս նոյն իսկ Թիֆլիզի մօտակայքում։

Անցեալ տարի Կովկաս. Գիւղատնտեսական ընկերութեան մէջ մորեխի մասին տեղեկութիւնք հաղորդողներն էին Պ. Պ. Յ. Խատիսեան և Ս. Խօջայեան։

Սոցա գրուածներից քաղումենք հետևեալ տեղեկութիւնները։ Մորեխը Կովկասում կարելի է ասել վաղուց է բուն է դըրել. լինում է տարի, որ սակաւ թւով է յառաջ գալի և անկատելի է մնում, իսկ լինում են տարիք, որ շատ բազմանումէ։ Այսպիսի մի մշտական թշնամու դէմ կիսահնարներով չի կարելի մաքառել. պէտք է գործածել զօրաւոր և հաստատ միջոցներ։ Մորեխի ջնջելու համար մեղանում աշխատեցնում են

ձրի կերպով միմիայն գիւղացիներին, իսկ մեծ հողատէրները, որոնց պատկանումէ Կովկասի հօղերի շատ մասը, բոլորովին առ մասն են մնում այդ աշխատանքից, այն ինչ՝ սոքա իւրեանց դրամական միջոցներով կարող են և պարտավան են աւելի օդ ներ գործին։ Յայտնի է որ մեր գիւղացիները համարում են մորեխը «Ասարձու պատիժ», այդ պատճառով նրանք մորեխը ջնջելու համար աշխատումն առ երես, քանի որ ոստիկանութիւնը նոցա գլխին կանգնած է. բացի այդ, քանի որ գիւղացիք վարձ չեն ստանում, այդ աշխատանքը նոցա համար «կոռուբեգար» է, ոստիկանութիւնից մի նոր հնարած հարկէ։ Այսպիսի սխալ հայեացք ունեցող գիւղացիներից ի՞նչ կանոնաւոր աշխատանք կարելի է սպասել մորեխը ջնջելու համար . . . Այս հիմնաց վերայ հարկաւոր է, որ մեծ կարուածատէրերը ընկերութիւն կազմեն՝ մորեխը ջնջելու համար միւս կողմից կառավարութիւնը հոգ տանի 1) պատրաստել տալու զանազան մորեխա ջարդ գործիքներ, ցաքաններ, աւելներ, մեծատեսակ թիեր և այլն. 2) պէտք է ոստիկանութիւնը և առհասարակ կառավարութեանը գետ ամառուանից յայտնի լինի թէ մորեխը որսկելիքում իւր ձուաները գնում է, որ միւս գարունք այդ ձուաները ջնջելու մասին աշխատուի։

Պ. Խատիսեանը իւր սեփական փորձերից անում է, որ քանի որ գեռ լսւ կանոնաւորուած չէ Կովկասում մորեխը ջնջելու գործը, ամէնից յարմար միջոցները մնում են մորեխներին այլ ելք, ինչպէս որ ոյժմ Բագուայ նահանգում անում են, մեծ փալաներ, նէֆթի մէջ թրջելով՝ մորեխների խմբելի վրայ ծածկում են և տակից վառում, — միւս կողմից՝ ձիանեւ-

րով և այդ միջոցներով կոխուանելը (ոտնակոխելը): Այս ամէնը, ՚ի հարկէ, պէտք է կատարել մի երկու շաբաթուայ ընթացքում, ոյն ժամանակից, երբ մորեխները ձուաներից գուրս են դալի. այդ երկու շաբաթից յետոյ այդ միջոցները այլ ևս չեն օգնիլ և անմեղ տեղ է լ հարկաւոր չէ չարչարել խեղճ ժողովրդին՝ դաշտը հանելով կոխուանելու և այդ կերպ ՚ի զուր զրկելով նոցա ապրուատի ուրիշ հնարներից։ Այս տեղեկութեանց և Կովկասեան Գիւղասնտեսական Ընկերութեան բարեխօսութեան հիմնաց վրայ Կովկասի գլխաւոր կառավարութիւնը բոլոր գուրերնատորներին ըստ հրամանի Փոխարքայի հրամանագրեց. 1) ամէն գաւառում, — ուր մորեխը երևացելէ, պէտք է կազմել յանձնաժողովներ, որնց մէջ լինին և գիւղասնտեսագէսներ, որ սոքա աշխատեն իմանալու մորեխի ձուաներ գրած տեղերը, և հոգան այն հնարների մասին, որնցով պէտք է գարնանի ջնջել այդ ձուաները. 2) որ այդ յանձնաժողովները ո՛չ միայն գիւղացիներին աշխատեցնեն, այլ այդ գործին մասնակից անել տան մեծ հողատէրներին։ Խնչ ծախսեր որ հարկաւոր լինին կառավարութեան կողմից, այդ մասին պէտք է յանձնաժողովները առաջուց հաշիւ ներկայացնեն, որ Փոխարքայի զլսաւոր կառավարութիւնը այդ գործի համար գրամական միջոց հասցնէ։»

Բայց մեզ յայտնի չէ թէ այդ յանձնաժողովները անցեալ տարի կայացել են և մի գործ շնութէ թէ չէ, այսքան յայտնի է, որ այս տարի մորեխը աւելի շատացաւ, քան անցեալ տարի էր . . .

Պէտք է յուսանք, որ գոնեա՛ այս տարի աւելի զօրեղ և ներգործական միջոցների պիտի գիմէ մեր տեղական կառավարութիւնը մորեխը ջնջելու համար :

Յանկալի է, որ Ընկերութեանս հրատարակած այս տետրակը վրացերէն ևս թարգմանուէր, որովհետեւ մորեխը տարածուած է այժմ մանաւանդ վրացաբնակ գաւառներում։ Ժամանակ է այս մասին մտածել վրացի առաջատարներին...»

## ՈՐԵՒՐ և ՆՈՐԱ կեանքը:

Ուր որ նայենք, սիրելի ընթերցո՞ղ թէ ամառ և մինչեւ  
անգամ ձմեռ ժամանակ, ամէն տեղ՝ դաշտում, անտառում և  
մինչեւ անգամ տան մէջ՝ տեսնում ենք, որ սոլում և թուշկոտում  
են զանազան ճշճուներ։ Նայելով նրանց վրայ, ոչ ոք չի էլ  
կարծի թէ այս մանր և թոյլ արարածները կարող են մարդուն  
վնաս բերել։ Բայց երբ միտք բերենք, որ մորեխն էլ սրանց  
նման է, թէև նրա սպանելը կամ ոտով ջարդելը դժուար չէ  
ամէնափոքր երեխայի համար էլ բայց գիտենք, որ նա շատ  
մեծ վնաս է հասցնում։ Գայլեր և զանազան գազանները այն-  
քան չեն վնասում մեզ, որքան այս մանր և թոյլ էակները։  
Գայլը փախցնում է մէկ ոչխար և դրանով վնաս է տալիս միայն  
մէկին։ Իսկ մորեխը՝ փչացնելով մեր արտերը՝ վնասում է բոլոր  
գիւղին և շատ անգամ հազարաւոր գիւղերի և քաղաքների մէջ  
ու բոլոր երկրում սով է տարածում։

**Ամէնքիս յայտնի է, որ մօրեխը անցեալ տարի շատ թւով  
երեւեցաւ Կովկասում և այժմ բաւական լաւ ենք նկատում նրա  
բերած պատճեններուն:**

1859 թուին մորելսը Բեսարաբիայում բոլոր հացը և ծառերը բոլորովին ոչնչացրեց՝ միայն ամբողջ ժողովրդի և կառա-

վարութեան օգնութեամբ կարողացան փչացնել այս խիստ վասակար թշնամուն:

Դ հարկէ այժմ կ'հարցնէք՝ թէ ինչից է, որ այս թոյլ և չնչն արարածները առաւել մեծ վաս են բերում մարդուն, քան թէ գայլը կամ գաղանը, որոնց մի տեսքը իսկ զարհութեցնում է մեզ: Կըս պատճառն այն է, որ նրանք հարիւր հաղարներով և մլլիքներով են թափվում արտերի վրայ:

Այժմ կ'պատմեմ ձեզ, պատուելի ընթերցո՞ղ համառօտապէս մորեխների կեաները և կ'առանենք թէ ինչպէս կարող է մարդ նրանց հետ կռուիլ և յաղթել:

Պէտք է որ ձեզանից շատերը տեսած լինին թէ ինչ բան է մորեխը: Նա հեռուից՝ առաւել տաք երկիրներից թռչում է դեպի մել երկիրները և ճանապարհին ինչ որ պատահում է իրեն ուտելու, ուտում է բոլորը ու ահագին դաշտեր թռչում է առանց մի խոտի: Մորեխները երբէք մէկ-մէկ կամ փոքր թռով չեն թռչում՝ այլ հաւաքվում ու մի ահագին գունդ են կաղմաւմ և այնպէս անցնում այն երկիրները, որ տեղ որ կարծում են իւրեանց համար կերակուր դանել: Երբեմն մորեխների գունդն այնպէս մեծ է լինում, որ մի ահագին պէտք ծածկում է արելը: Այսպիսի գունդ նստելով ծառերի վրայ՝ իւրեանց ծանրութեամբ կոտրատում են նրանց Ճիւղերը: Եթէ մոտերենք թէ ինչպիսի փոքր բան է մորեխը՝ լուս կը հականանք թէ քանի հատ պէտք է նստի ծառի վրայ, որ սա նրանց ծանրութիւնից կոտրուի: Երբ այս ասածիս վրա աւելացնեմ, որ ոչ թէ մի կամ երկու ծառի Ճիւղեր են ջարդվում մորեխների նստելուց, այլ երբեմն ամող գիւղի այգիներում եղած ծառերը, այն ժամանակ լուս կ'հարցնէք թէ պատմում է մեզ վրայ:

Հարիւր հաղար մորեխ պէտք է լինի եկած և թէ ինչպիսի բազմութիւնից է բաղկացած նրանց գունդը: Սրանից է, պատուելիք, որ գիւղացին առանց սարսափանքի չէ կարող նայել մորեխի լամբերի մօտանալուն: Այսպիսի գունդը երբ գտաւիր համար կերակրի տեղ, իսկոյն իջնում է գետենի վրայ և ոչնչացնում է բոլորը ինչ որ այնտեղ բօւնում է, այնպէս որ մէկ-երկու ժամից յետոյ ոչինչ չէ մնում ոչ գաշտերում և ոչ այգիներում: Դաշտերում բոլոր հացը կերած է՝ այգիներում ծառերը մնում են մերկ՝ կարծես ձմեռն է հասել և երբ այսպէս մէկ տեղ կերան բոլոր ինչ որ ցանել էր մարդ, թռչում են բոլորը միասին մի ուրիշ տեղ, ուր մի և նոյնն են անում, ինչ որ արին առաջնում: Այսպէս ուր որ երեսում է մորեխը, իւր հետ սովից աւելի ոչինչ չէ բերում, և ուր մըանդամ երեւեցաւ, այնտեղ երկար ժամանակ չեն մնուանում այդ դժբաղդ տարին: Այժմ ՚ի հարկէ կ'հարցնէք՝ թէ ո՞րտեղից է մորեխը դալիս մեր կողմերը, ո՞րտեղից են թափվում մեզ վրայ կարկուտի նման և ուտում ու փչացնում բոլոր մեր աշխատանքը: Մեզանից շատ հեռու կայ մի տաք երկիր, որ ասվում է Արաբստան, այնտեղ է ծնվում և բազմանում է մորեխը և յետոյ գալիս է մեր կողմերը: Ելի կ'հարցնէք թէ ինչից է, որ այնտեղ չէ մնում, այլ գալիս է մեզ մօտ հիւր: Պատճառն այն է, որ իւր հայրենիքում մորեխը կերակուր չէ գտնում և գալիս է մեզ մօտ առժամանակ կշտանալու համար: Այսպիսի մեծ ձանապարհ անցնելու համար նրանք պէտք է լաւ թեեր ունենային: — և մնիք տեսնում ենք, որ նա երկու ջուխտ թեեր ունի, միայն այս թեերից մէկ ջուխտն է օգնում թռչելու, իսկ միւսը վերեկց ծածկում է այդ մեծ և բարակ թեերը: Այս մի ջուխտ և

բարակ—երկար թևերով նա կարող է թռչել օրը քսան և չորս վերատ: Մորեխների մեջ պէտք է զանազաններ արու և էգ, ինչ պէս և բոլոր ուրիշ արարածների մեջ: Անրու մորեխը զանազանվում է էգ մորեխից իւր գոյնով— նա առաւել դեղին գոյնունի և նրանիցքից փոքր է: Արտերը ոչնչացնելուց յետոյ նոքա խոստահայտամ էն (միաւորվում են): Այս միաւորութիւնն ամենատարի մի և նոյն ժամանակ չէ լինում, երբեմն խառնակվում են փոքր ինչ վաղ, երբեմն ուշ: Պատահում է, որ խառնակվում են օգոստոսին, պատահում է և այնպէս, որ սեպտեմբերին և երբեմն հոկտեմբերին: Խառնակվելու ժամանակը կախված է գրւիսաւորապէս եղանակից: Նոքա առաջուց զգում են թէ ինչ պիսի օրերկ լինեն, և եթէ զգում են, որ ցուրտ օրեր են մօտենալու, այն ժամանակ շտապում են խառնակվել և ածել ձուաներ, քանի որ ցուրտը չէ հասել: Մորեխները ամենքն չեն խառնակվում, այլ խառնակվում են բոլոր էգերը և արու մորեխներից միայն մի մասը, որոնք առաւել մեծ են: Երբ որ խառնակվում են մորեխները, նրանց շատ հեշտ է ջնջել—վաղ առաւոտներ ջախ-ջախելով, որովհետեւ էգ մորեխները, որոնք պէտք է հանգստանան և սպասեն, չեն կարող թռչել ձուաներով, որ գտանվում են արգանդում, շատ են ծանրացած: Մի քանի տեղերում նրանց այսպէս են ջարդում: ձիաների խումբը վազեցնում են դաշտի մէկ ծայրից մինչև միւսը: Շատ անգամ այսպիսի տեղերում թողնում են, որ մի քանի օր ոչ խարներ ման գան և ոտի տակ՝ անեն մորեխներին: Բայց այդ երբէք չ'պէտք է թռչնել ոչխարներին, որովհետեւ նրանք ուտում են մորեխներին խոտի հետ, այս հանգամանքը անշոշտ կարող է պատճառ դառնալ ոչխարների հիւանդու-

թեանը: Մորեխները խառնակուելուց յետոյ, սկսում են գետինը փորել և այնտեղ ածել իրանց ձուաները: Կողքերից և վերևից իրանց ձուաները ծածկում են մի դեղին՝ թռչուքի նման հեղուկով և յետոյ դրանց վրայ ածում են հող: Այնպէս որ ձուաները չըր կողմից ծածկած են այն հեղուկով, որ խառնվում է հողի հետ և պատում է ձուաները—այդպիսով կաղմվում է մորեխի բունր:

Ձուաները ածելուց յետոյ, եթէ տաք օրեր են, փոքր ինչ հեռանում են իրանց ձուաներ դրած աղջից և մօտիկ զաշտի վրա կոտորվում են, իսկ եթէ ցուրտ օրեր են լինում, հէնց իրանց ձուաների վրայ են կոտորվում: Առաջ կարծում էին թէ որտեղ որ կոտորված մորեխներ կան, հէնց այնտեղ են նրանց բուները, իսկ յետոյ յայսնուեց, որ երբեմն—այն է՝ տաք օրերում, նրանք թռչում են փոքր ինչ հեռու և այնտեղ են կոտորվում: Այնու ամենայնիւ եթէ որ զաշտում գտնում ենք կոտորված մորեխներ, կարող ենք հաստատ ասել թէ այստեղ կամ թէ չէ նրանից մօտիկ տեղ մորեխը ածել է իւր ձուաները: Երբեմն աշնան ժամանակ են ջնջում մորեխներին, երբ նրանք ձուաներ են ածում: Այդ ժամանակ պէտք է զանազաններ այն էգ մորեխներին, որոնք արգէն ածել են իւրեանց ձուաները, և նրանց որոնք գեռ չեն ածել: Այն մորեխների սպանելը, որոնք արդէն ձուաներ են ածել ոչինչ օգուտ չունի, որովհետեւ նրանք էլ անվիսաս են, արդէն նրանք դրել են իւրեանց ձուաները և շուտով կ'մեռնին: Այս մորեխները միւս մորեխներից զանազաննվում են փորի մեծութեամբ: Առաջինների փորը փոքր է և շմշկած, իսկ երկրորդներինը՝ մեծ և փքած:

Մորեխը ամեն տեղ չէ ածում, այլ ընարում է այն-

պիսի տեղ ուր գետինը պինդ լինի, որովհետեւ պինդ դեսնի  
տակ ձուաներն աւելի լաւ կարող են պահպանվել: Բացի պինդ  
գետնից, նա սիրում է աւելի ձուաներ ածել աւազուտ տեղե-  
րում կամ թէ չէ այնպիսի գաշտերում, որտեղ ոչինչ չէ բռւ-  
նում:

Պատահում է, որ մորեխը իւր ձուաներն դնում է ան-  
տառում, ուր նրանք խոնաւութենից և ցրախց ինքն իրանք  
կորչում են և փչանում: Շատ աեղերում աշնան ժամանակ, երբ  
մօտենում է նրանց միաւորութեան ժամանակը, մորեխներին  
քշում են դէպի անտառ, որ այնտեղ ածեն իւրեանց ձուա-  
ները: Այստեղ հարկաւոր է աւելացնել որ մորեխը իւր ձուն  
մէկ կամ թէ չէ զանազան գաշտերի վրայ է ածում: Մորեխ-  
ները առաւել սիրում են մէկ գաշտի վրայ ածել: Իսկ եթէ  
պատահում է, որ ձուաները զանազան գաշտերի վրայ են լի-  
նում, դորա պատճառը մարդն ինքն է: Եթէ մարդը խանգա-  
րում է նրանց ձու ածել այն ժամանակ նրանք թռչում են  
զանազան կողմեր, ցիր ու ցան են լինում և մի խումբը մէկ  
տեղ է ձու ածում: միւս խումբը ուրիշ տեղ: Իսկ եթէ ար-  
գելք չ'կայ, բոլորը միասին:

Գետնի տակ ձուաները մնում են ամբողջ ձմեռը, և գար-  
նան ժամանակ ձուաներից գուրս են գալիս մանր մորեխներ:  
Պատահում է, որ աշնանը շատ տաք է լինում, այդ դէպում  
աշունքին են դուրս գալիս մանր մորեխներ և յետոյ ցրախց և  
քաղցածութիւնից ոչնչանում են: Իսկ եթէ աշունքն տաք չէ  
լինում, այն ժամանակ մորեխները ձուաներից գուրս են գալիս  
միայն գարունքին: Ձուաներից գուրս զալու ժամանակը գա-  
նազան է և կախված է եղանակից: 1860 թուականին նոյնու-

ովյամկի գտւառում մորեխը ակսեց դուրս գալ մայիսի 13-ին,  
իսկ առաւել ցուրտ նահանգներում, ինչպէս Պոդոլսկի նահան-  
գում, սկսեց գուրս գալ միայն յունիսից: Առհասարակ եթէ  
գարունքը տաք է, նրանք սկսում են երեալ մայիսին, աբասա-  
հում է, որ ապրիլն էլ են դուրս գալիս, իսկ եթէ գար-  
նան ցուրտ է լինում, այն ժամանակ գուրս են գալիս յունիսին  
և յուլիսին: Եթէ որ մնաք մի անգամ դուրս եկած մորեխն  
ջնջնք, այդ գեռ բաւական չէ, պէտք է ջարդենք և այն մո-  
րեխներին, որոնք փոքր ինչ յետոյ դուրս կ'գան: Մենք գիտենք  
որ գարնան օրերը միանման չեն, մէկ օրը աւելի տաք է, միւս  
օրը աւելի ցուրտ: Եթէ մորեխների մէկ խումբն տաք օրում  
գուրս եկաւ գետնից, պէտք է սպասենք, որ մի քանի օրից յե-  
տոյ գուրս կ'գայ միւս խումբը, երբ նորից տաք օր կ'լինի: Այդ-  
պէս էլ պէտք է միշտ հետեւինք և ջնջնք ամեն մի նոր գուրս  
եկաղ խումբը:

Այս մանր մորեխները զանազանվում են մեծերից միայն  
նրանով, որ չունեն թռչելու թերեր, երեք կամ չորս օր սրանք  
ոչինչ չեն ուտում և շատ են սիրում բարձրանալ բարձր փայ-  
տերի վրայ, կամ թէ չէ բարձր բոյսերի վրայ և այնտեղ անց-  
կացնել գիշերը: Այս երեք չորս օրից յետոյ նրանք սկսում են  
ուտել և ոչնչացնել բոլորը ինչ որ լինում է բուսած արտերում:  
ապա անցնում են մի ուրիշ արտ և այստեղ էլ ուտում են բոլորը,  
ինչ որ կարելի է ուտել: Զուերից գուրս գալուց յետոյ առաջն  
երեք շաբաթը նրանք վատ են վագում, ման են գալիս թմրածի  
պէս և շատ անգամ բաւական է այն գաշտը, որտեղ սրանք  
դուրս են եկել չըս կողմից առուով պատել որ արգելենք նրանց  
միւս գաշտը անցնել: Երեք շաբաթից յետոյ նրանք փոխում են

կաշին—ինչպէս որ օձը հանում է իր շապիկը։ Այս կաշին փոխելուց յետոյ նրանք սկսում են շուտ մեծանալ լու վազ վըղել և թռչոտել Սրանից յետոյ նրանք խիստ ահաւոր են արաերի համար։ Թեաւոր մորեխը երբէք չէ կարող այնպիսի մեծ վնաս բերել ինչպէս որ սրանք առաջին կաշին փոխելուց յետոյ։ Մէկ արտից անցնելով միւս արտ՝ սրանք ճանապարհին փացնում են բոլորը ինչ որ պատահում է, ել մի խոտ չէ մնում որ չուտեն։ Մինչև անդամ գետն չէ կարող դրանց առաջն առնել։ Մէկ ափից անցնում են միւս ափը և այնտեղ շարունակում են իւրեանց գործը։ Այսպէս մեծանում են օրէցօր և վեց շաբաթից յետոյ փոխում են երկրորդ կաշին—բուսնում են թեեր և այն ժամանակ թռչում են ուրիշ կողմեր, ուր կարծում են իւրեանց համար կերակուր գտնել ու թռչելով մէկ տեղից միւս տեղ՝ բոլոր իւրեանց չորս կողմը տարածում են սովոր մինչև օգոստոս ամիսը և յետոյ ձուաները ածելուց յետոյ կոտորվում են։

Շառաջ ասում էին, որ մորեխը կարող է բազմանալ միայն տաք երկիրներում և թէ մեր կողմերում չէ կարող բազմանալ, բայց յետոյ հաստատուեց, որ ոչ թէ մեր երկրում, այլ և առաւել ցուրտ երկիրներում էլ են բազմանում։ 1790 թուականին մորեխը երեցաւ Սկսնդինավեայում, որ Ռուսաստանից առաւել ցուրտ երկիր է և երեք տարի շարունակ մնաց այնաւել ՚ի հարկէ ամէն տարի ածելով նոր ձուեր և այս երեք տարում կարելի է ասել որ ջնջեց բոլոր բուսականութիւնը— ամբողջ երկիրը աւեր դարձրեց։ Նմանապէս, առաջ ասում էին թէ մորեխը չէ կարող թռչել այն կողմը, որ կողմը կամենայ, այլ թռչում է այն կողմը դէպի ուր փչում է քամին։ բայց

յետոյ հաստատուեց, որ քամին քիչ է խանգարում նրանց կամեցած կողմերը թռչել առ ամառ դժուար դադար ։ Եւ այսպէս մորեխների ահազին ամպերը իջնում են արտերի վրայ և սկսում են ուտել բոլորը ինչ որ կայ։ Մորեխը չէ ընտրում իւր համար մէկ տեսակ կերակուր, այլ ուտում է բոլոր ինչ որ կ'պատահի։ Երբ արտերի վրայ բոլոր հացը կերած է, նաև թռչում է դէպի միաս արտ և երբ այնտեղ էլ կերաւ բոլորը, նաև սկսում է միւնայն ախորժակով ուտել ծառեր, զանազան անպիտան խոտեր և այլն։ — Նթէ մորեխը մտնում է սենեակի մէջ, այստեղ էլ չէ մնում պարապ, սկսում է լաւ համով կրծել գրքեր, թռչել, մինչև անդամ տախտակներ էլ։

Մորեխը ջնջելու հնարները։

Մէնք ծանօթացանք համառօտապէս մորեխների կեանքին։ Այժմ տեսնենք թէ մարդ ինչպէս կարող է յաղթել և ջնջել այսպիսի ահաւոր թշնամուն։ Մորեխը ջնջելու համար ամէնից լաւ և օգտակար միջոցն է ոչնչացնել նրանց ձուերը։ Եւ այդ այնպէս դժուար չէ, ինչպէս երեւում է, եթէ մոտաբերնեք, թէ ուր է ածում մորեխը իւր ձուերը։

Զուերը, ինչպէս արդէն գիտէնք, նա ածում է աւագոտ տեղեր կամ թէ չէ այն գաշտերի վրայ, որտեղ որ ոչ մի խոտ չէ բուսնում և որ իւր ձուերը ոչ թէ առանձին-առանձին է գնում, այլ միասին մօտ հարիւր հատ, ուրեմն եթէ գտնենք այսպիսի մէկ բնի տեղ, կարող ենք միանդամ ոչնչացնել մօտ ութսուն

կամ հարիւր հատ մորեխ, որոնք գուրս էին գալու այն ձուերից: Մորեխի բունը գտնել շատ հեշտ է: Առաջին որ դիտենք ինչպիսի տեղէ ձու ածում, երկրորդ որ հարիւր հատ միասին է ածում և երրորդ որ ինքն էլ ձուերի վրայ է: սատակում կամ թէ չէ ձուերից մօտ տեղ: Ուրեմն այս բոլոր գիտենալով շատ հեշտ կարող ենք գտնել նրանց բուները: Նթէ, երկխաններին ամեն տասը բունի համար մի կոպէկ տանք, մենք կ'ունչացնենք մէկ կոպէկով մօտ հաղար մորեխ, բայց եթէ բոլոր գիւղը այսպէս վարուի, այն ժամանակ մորեխի ջնջելը խրաքանչեւրին հազիւ երեք—չորս մանէթ նստի: Ուրեմն երկու—երեք մանէթով աղատում ենք մեր արտերը մորեխից—միայն այս միջոցը պէտք է հասկացողութեամբ գործ դնել:

՚Ի հարկէ այս կերպով չէ կարելի ունչացնել մի տարում բոլոր մորեխներին, բայց կարելի է փչացնել նրանց մեծ մասը: Որ այսպէս սկսենք հաւաքել աշունքին մորեխների բուները, էլ մինչև գարունքը կ'մնան քիչ ձուեր, որոնցից գուրս կ'գան մանր մորեխներ: Խնչպէս յայտնի է մեզ, մանր մորեխները առաջին երկու—երեք օրը ոչինչ չեն ուտում և սիրում են բարձրանալ բարձր փայտերի վրայ կամ թէ չէ բարձր բոյսերի վրայ ու այնտեղ անցկացնել գիշերը: Նոյնպէս սիրում են հաւաքուել բոլորը միասին ու բարձր բուսած արտերի մէջ գիշեր անցկացնել: Նթէ որ այսպիսի դաշտում մի քանի տասնեակ փայտեր ցցենք մարդու հասակի՝ բարձրութեամբ, կալող ենք ամէն առաւօտ արևը ծագելուց առաջ, երբ մորեխը դեռ քնած է, քսակով հաւաքել այդ փայտերի վրայ նստած մորեխներին: Այսպէս եթէ շարունակենք միւս օրերն էլ կարող ենք ջնջել աշունքից ֆնացածների մեծ մասը: Սրանից յետոյ այնպէս քիչ

մորեխ կ'մնայ, որ առանձին վնաս չէ կարող բերել մարդուն: Եթէ այս երեք օրը չաշխատինք մորեխին ջնջել յետոյ դըժուար կ'լինի նրան յաղթել Խնչպէս յայտնի է մեղեւ երեք օրից յետոյ նա արդէն սկսում է ուտել և երկու շաբաթից յետոյ յաւ վազմողել: Այդ ժամանակ սրանց ջնջում են զանազան կերպով. իսկ երբ գուրս եկան թեւերը և մորեխը թռչում է, այն ժամանակ անկարելի է լինում նրան յաղթել: Նատ տեղեւ րում, երբ մորեխի գունդը մօանում է, կըակեն վառում դաշտերում, հրացաններ են արձակում—բղաւում են և այն:— Այսպիսի միջոցները բոլորովին աւելորդ են, որովհետեւ ոչինչ օգուտ չեն բերում: Ասենք թէ իմ արտի վրայ չնստեց մորեխը, երբ կըակ վառեցի, բայց միւնոյն է, որովհետեւ հարեանի արտի վրա կ'նստի և էդուց էլ իմ արտի վրայ կ'երեայ:

**Այսաց ջարդելու համար գործ են ածում զանազան գործիքներ:**

**Այստեղ հարկաւոր է աւելացնել որ այն միջոցները, որոնց համար կ'խօսեմ, պէտք է, որ բոլոր գիւղը միասին գործ դնէ, իսկ եթէ մորեխը երեւց շատ զիւղերում, պէտք է որ բոլոր այս գիւղերը միասին գործ են:**

**Այժմ կ'պատմեմ այն միջոցները, որոնք արդէն շատ տեղ գործ են դրած օգուտով:**

**Երկու կերպով են ջնջում մորեխներին՝ աշխացնելով նրանց ձուերը և լուսակացները մարդէն ձուերից դուրս եկած մորեխներին ջարդելով: Նախ տեսնենք թէ ինչպէս կարելի է ջնջել նրանց ձուերը: Դրա համար զանազան միջոցներ են գործ ածում: Ամէնից հեշտ և էժանն այս է, այնտեղն, ուր մորեխը իւր սերմերը ածել է, գետինը աշունքին վարում են միայն երկու**

վերշոկի խորութեամբ և ցաքանում են այդ գետինը երկաւթէ կրմուխով՝ ուղում եմ ասել, որ փորելով գետինը մենք մորեխի ձուերը շուր ենք տալիս և ածում գետնի երեսը, այսպիսով պանք մնալով բաց օդում՝ անձրեից և ցրտից փշանում են: Եթէ այսպէս չ'անենք նրանք կ'մնան գետնի տակ և շատ լաւ կ'պահպանուին ցրտից: Ուր գետինը պինդ չէ, չի էլ հարկաւոր կրկին հերկել բաւական է միայն ցաքանել Աւելի լաւ է, որ այդպէս հողը մանրացնելու հետ երեխաներին յանձնենք, որ հաւաքեն մորեխների բուները, կամ թէ չէ, թող տալ մի քանի օր այդ դաշտերի վրայ արածել խոզերին, որոնք մեծ ադահութեամբ ուտում են մորեխների ձուերը և մի և նոյն ժամանակ իրանք ոչինչ մնաս չեն ստանում: Արդէն շատ տեղ այս միջոցով կարողացել են մորեխներին ոչնչացնել: Պատում են նմանապէս, որ ուրիշ աեղերում այդ միջոցը ոչինչ օգուտ չէ բերել բայց երեւեցաւ, որ այդ նրանից է պատահէլ, որ գետինը շատ խոր էին փորել: Երկու վերշոկից աւելի խոր փորելով շուռ ենք տալիս գետինը և ձուերը նորից հողով ենք ծածկում: Բոլոր վերեւ ասածներս պէտք է աշունքին անել իսկ գարնան ժամանակ քանի որ մորեխը չէ դուրս եկած գետնից, լաւ կ'լինի եթէ այսպիսի դաշտի վրայ ոչխարներ արածացնենք, կամ կովեր, կամ թէ չէ ձիաներու խումբ բաց թողնենք: Նրանք ման գալով դաշտի վրայ՝ գետինը պնդացնում են ու գրանով աշնան կոտորածից մնացած մորեխներին արգելում են գետնից դուրս գալ: Իսկ ձուերից նոր դուրս եկած մորեխը շատ թոյլ է լինում և չէ կարող պինդ—գետինը փորել ուր և կոտորվում են քաղցածութենից: (Գետինը փորելու համար գործ են ածում երբեմն ուրիշ տեսակ գութան (ալաթ): Նորա

պատկերը և թէ ինչպէս պէտք է գործ ածուի, կ'աւելացնեմ վերջը:) Բոլոր ասածներս գործ են դնում այն ժամանակ, երբ գետինը հաւասար է կամ թէ չէ նրա վրայ ծառեր չ'կան: Իսկ եթէ մորեխը իւր ձուերը դիել է բլուների վրայ կամ թէ չէ այդիներում, այն ժամանակ գործ են ածում ուրիշ միջոց: Գետինը փորում են բահով և ձեռքով հաւաքում մորեխների բուները, որոնց հաւաքել շատ հէ, որովհետև մօտ հարիւր հատ ձու միասին են լինում դրած և չորս կողմից պատած լինում հողով: Այդ բուները բաւականին մեծ են լինում, աղաւնու ձուի չափ, ուրեմն նրա գտնելը դժուար չէ: Ամէն մէկ հաւաքով տանում է իւր հետ մի պարկ, ուր ածում է բուները: Բուները հաւաքում են այսպէս: Մի քանի մարդ կանգնում են այդու կամ ագարակի մէկ ծայրում և նոյնքան մարդ էլ միւս ծայրում և փորելով գետինը մօտենում են իրարու: Յետոյ յետ են դառնում էլի նորից լաւ տնտղելով փորած գետինը, որ բուն չ'մնայ և այդպէս շարունակելով փորում են ամբողջ այդին: Թէ և այս միջոցը առաջուանից քիչ դժուար է, բայց սա առաւել լաւ է: այսպէս կարող ենք միասիտ լինել որ ձու էլ չէ մնացել գետնում: Հաւաքած ձուերը կամ այրում են կամ թէ չէ թալում են շատ խոր գետնի մէջ և վերևից պնդացնում ւելի լաւ է այրել:

Բոլոր պատմած միջոցներս գործ են դնում, երբ հաստատ գիտեն, որ մորեխը մէկ տեղ է դիել իւր ձուերը, այսինքն մէկ երկու դաշտի վրա: Իսկ եթէ ձուերը պահապան դաշտերում են ցիր ու ցան արած, այն ժամանակ պէտք է սպասել, որ մորեխը գուրս գայ ձուերից, ապա միասին բոլորը ջնջեն:

Այժմ կպատմեմ թէ ինչպէս պէտք է ջնջել արգէն ձուերից դուրս եկած մորեխներին։ Երբ մորեխները դուրս են եկած ձուերից, ինչպէս գիտենք, նրանք առաջին երկու—երեք օր ոչինչ չեն ուտում և նատած են լինում բարձր փայտերի վրայ։ Այս երեք օրը նրանց հաւաքել շատ հեշտ է, ինչպէս արգէն պատմել եմ առաջ։ Մենք նոյնպէս գիտենք, որ առաջին երեք շաբաթը մորեխնը շատ ծանր է ման դալիս. և սիրում են գիշերները հաւաքվել միասին։ Այդ ժամանակ հենց գիշերներով նրանց շուրջը դարսում են չոր խոտ և վաղ առաւօտ արևից առաջ, երբ մորեխնը դեռ թմրած է, վառում են այդ խոտը։ Մորեխները տաստիկ փաքից կռարկվում են, իսկ որոնք ուղղում են դուրս թըռչնինում են կրակի մէջ և այրվում է ացի այդ՝ նրանց ջռնամ են ջարդելով։

Ինչպէս գիտենք, մորեխնը երեք օրից յետոյ սկսում է ման դալ գաշտում և ընտրում է մէկ ճանապարհ ու բոլոր մորեխները զնում են այդ ուղղութեամբ գէպի մէկ կօղմ։ Այդ ժամանակ մշակները կանդնում են նրանց գէմ ձեռներին Ճեխերից (ցախէրից) շինած աւելներով, որոնց խփելով գետնին՝ չեն թողում, որ մորեխնը առաջ գնայ։ Սկզբի եկողները յետ են գառնում, իսկ նոր եկածները չեն թողնում գրանց յետ գառնալ և բոլոր խառնվում են իրար ու մէկ միւսի վրայ է բարձրանում և վերջապէս բոլորովին շշկլվում են։ Այն ժամանակ մշակները գրանց շրջապատում են։ Յետոյ բերում են տափան լծած ձիերով և սկսում են շոջանի մէջ պատել և մորեխին ջարդել։ Այդ գործը կրկնում են մի քանի անգամ, այնպէս որ ոչնչանում են բազմաթիւ մորեխներ։

ընկնում և մեղ յայտնի է թէ որ կողմն է նա գնում, այս ժամանակ գիշերով վարում ենք մէկ արշին խորութեամբ, եօթը ութ առժէն երկայնութեամբ փոս (խանդակ) այն ուղղութեան դէմ, որով մորելսը պէտք է անցնի. Միւս առաջօտ մորելսը մօտենալով այդ փոսին՝ ընկնում է նրա մէջ, Յետ դառնալըն կարող որովհետեւ ետեից եկողները արգելք են լինում, բոլոր փոսը լցվումէ մորելսներով, ետեից եկողները անց են կենում են փոսի մէջ թափածների վայրով, և եթէ շինած լինենք ճանապարհին էլի մի քանի այդպիսի փոսեր միւսներն էլ այնտեղ կընկնին. Ամս մէկ այդպիսի փոսի մօտ կանգնուծ են լինում մարդիկ, որոնք փոսի մէջ ընկած մորելսների վայածում են հող և յետոյ վերեից ճնշում են ոտերով, ինչպէս որ գինի քամելս, կամ թէ ծեծում են ծանր փայտերով. Առաւել լաւ է, որ դէպի փորած փոսը դութանով ակօններ անենք, որովհետեւ մորելսը սիրում է աւելի զբանց միջով անցնել.

Առելսաջարդ ցաքանը (валокупка) (պատկեր 1.) շինում են այս կերպ՝ վեր են առնում երկու հաստ փայտի ձող, առէն մէկը և արշին երկարութիւնով, և կապում են նրանց իրար հետ ծայրերից, այնոգէս որ երկու փայտի մէջ բաց տեղ մնայ երկու վերշոկի չափ; Յետոյ այդ երկու ձողերի մէջ այս ծայրից մինչև միւս ծայրը մուցնում են ծառերի ճիւղեր  $1\frac{1}{2}$  արշին երկարութեամբ, այդպիսով ստոմում ենք մի բան աւել ի պէս բան, որին առում ենք մորելսաջարդ ցաքան: Դրան թեք են զցում գետնի վայ և վերան դնում մի ծանր տախտակ, որ եթէ թեթև լինի, պէտք է զբան վայ էլ որիշ բաներ գնել: Վերջը ձողերի երկու ծայրերից կապում են պարան և լցում ճիւղ: — Այդ ցաքանը գործ են դնում այսպէս: Այն

դաշտը, որի վրա երեացած է մորեխ, մի քանի մասերի են բաժանում, և ամէն մի մասի համար գալիս են 15 մշակ, որոնց տասը մարդ շրջապատում են իրենց մասը, իսկ հինգը ցաքանները քում են. այդպիսով այդ մասի մորեխները ջարդվում են. Այն տասը մարդը, որոնք իրենց մասը շրջապատել են, ձեռներում բռնած ունին աւելն եր, որոնցով նրանք չեն թողում մօրեխներին դուրս գալ շրջանից. Այս գործը պէտք է անել առաւտաները արել դուրս գալուց առաջ, երբ մորեխները դեռ քնած են, և բոլոր մասերի վրայ միասին պիտի ակսել, որ մորեխները մէկից միւսը չ'փախչեն և կամ եթէ փախչեն միւսում լինին ջարդված:—

1003 | 1004

Ուրիշ տեսակ մորեխաջարդ մեքենա շինում են այսպէս (աե՛ս պատկեր 2) երկու արշին երկարութեամբ և 4—5 վերշոկ լայնութեամբ երկու տախտակների մէջ շարում են քանոնաձեռքքվող բարակ տախտակներ, որոնց պնդացնում են այն երկու մեծերի մէջ. այդ բարակ տախտակներին մենք կանուանենք ատամներ. այդ ատամները պիտի շարած լինեն իրար մօտ-մօտ. որով նրանք սանրի ձեւ կ'ստանան. վերևի երկու մեծ տախտակների վրայ աւելացնում են նոյնպիսի մի տախտակ՝ ուղղահայեաց դէպի ատամները. իսկ այս վերջի տախտակին կացնում են օղեր ձի լծելու համար: Այդ տախտակի վրայ դնում են որ և իցէ ծանրութիւն: Վերևի տախտակը պիտի աշխատել այնպէս ամրացնել, որ ատամները թեքված մնան դէպի գետինը, իսկ ինքը տախտակը այդ ժամանակ կլինի զուգահեռական գետնի հետ: Այս մեքենան նորանովէ լաւ, որ կարելի է գործ ածել ամեն տեսակ դաշտում: Ասենք թէ ճանապարհին քար պատահեց, առաջին մեքենայով չենք կարող ճնշել այն մորեխ-

ներին, որոնք քարի կողքերումն են թաքկացած: Բայց այս մեքենայով կարելի է: Սանրի ատամները դիպչում են քարին, ծալվում են, իսկ կողքերից եղածները ջարդում են թաքնուած մօրեխներին:

Բացի այս գործիքներից, որ ճնշում են մորեխներին, կան էլեւ ուրիշ տեսակ գործիքներ, որոնցով ողջ-ողջ հաւաքում են մօրեխներին: Այս գործիքներից ես միայն մէկ տեսակի մասին կ'խօսեմ (տես պատկեր 3), որ ամէնից առաւել հետո է գործ ածել և մի ևնոյն ժամանակ մեծ օգուտ է բերում: Պատմեմինչ ովէս են պատրաստում այդ գործիքը: Վեր են առնում մէկ տախտակ երկու արշին երկայնութեամբ և այդքան էլ լայնութեամբ: Յետոյ երկու երկու անկիւնաւոր տախտակներ, որոնց մէկ կողմը երկու արշին է, իսկ միւսը՝ մէկ արշին, և կացնում են առաջին տախտակի կողքերից: Յետոյ առնում են էլեւ մէկ տախտակ երկու արշին երկայնութեամբ և մէկ արշին լայնութեամբ և կացնում են այն առաջին տախտակի յետեից: Այդպէս ստանում ենք մէկ արկղի նման բան, որ մէկ կողքից կարած է, այդ արկղի վերեկց կացնում ենք մէկ տախտակ կէս արշին լայնութեամբ և գործիքը պատրաստ է: Մնդուկը դնում են երկու փայտերի վրայ, որ քաշ տալու ժամանակը տակի տախտակը չ'փանայ: Այս մնդուկի առաջից կապում են թոկ և լծում են ձիաներ:

Դաշտի վերջում, ուր դուրս է եկել մօրեխը, փորում են մի քանի փոսեր և յետոյ դաշտի մէկ ծայրից սկսած վազեցնում ձիաներին քանի կարելի է արագ դէպի փորած փոսը և մօրեխները որ ընկնում են այս արկղի մէջ, ածում են փոսը ու ջարդում: Այն մօրեխները, որոնք ընկան այս մնդուկը, էլ չեն կարող դուրս թռչել, որովհետեւ ամեն բոպէ մինչեւ փոսը

հասնելունորելն են ընկնում, այնպէս որ շշկված մորեխը մինչդեռ կապտրաստուի գուրս թռչել, արգեն նոր մատածները կծածկեն նորան:

Շատ լաւ կ'լինի եթէ հինգ-վեց այսպիսի գործիքներ կարգով մէկ միւսի մօտ քշենք դէպի փոսը:

Խմ կարծիքով լաւ կ'լինի, որ դաշտի երկու կողմիցն էլ փոսեր փորենք, որպէս զի երբ մէկ ծայրից անցանք հասանք մինչև փոսը, նորից յետ դառնալով միւնայն ճանապարհով և մացած մորեխիները միւս փոսը ածենք: Պէտք է ձիաներին քանի կարելի է շուաշուտ փոխել և որքան կարելի է արագ քշել, քշողը նստում է մնդուկի վերելի տախտակի վրա: Այս Այժմ ես կարծում եմ, որ գուք լաւ կ'հասկանաք, որ մորեխը մորդի չափ զօրել չէ և մարդ միշտ կյաղթէ այդ տեսակ թշնամուն: Միայն հարկաւոր է, որ ամէնքս միասին գործենք և այն ժամանակ բոլորովին պէտք է համոզված լինենք, որ կյաղթենք մորեխին, ինչպէս որ յաղթել են շատ տեղերում: 1859 թուականին մորեխը երևաց Բեսարաբիայում և պատմած այն գործիքներով և միջոցներով յաղթեցին և ջնջեցին նրանց: Մնում է աւելացնել որ թրեւելու գործիքներում ամէնից լաւ է ձիաներ լծել պէտք է հէնց որ երեաց մորեխը, իսկոյն սկսել նրան ջնջել որովհետեւ եթէ որ նոր գուրս եկած մորեխին կարող է ջնջել երեք-չորս մարդ ամէն օր հարիւր հաղարներով, յետոյ երբ նրանք քիչ մեծանան, հարիւր մարդ հաղեւ կարող է այնքան մորեխ ջընջել ինչքան առաջին երեք օրերը: Ուրեմն քանի որ մորեխը թոյլ է, պէտք է շտապել նրան ջնջել նրբ մորեխը սկսում է ձու ածել, հարկաւոր է հետեւել և լաւ հետեւել իմանալու հա-


մարթէ, ինչ տեղ է ածումնա իւր ձուերը: Ամէնից լաւ է, որ ջնջենք մորեխը աշունքին և գալնան ժամանակ, երբ գիւղացիք գործ չունեն և չեն սկսել ցանքը, դրանով չե խանգարվել, նախ նրանց գործերը և երկրորդ՝ գայդ ժամանակ ամէնից հեշտ և յարմար է մորեխին ջարգել:

Մեզ մնում է մի քանի խօսք անել այստեղ մորեխների միւս թշնամիների մասին և թէ դրանք ինչ օգուտ են տալիս մարդուն: Կաթնասուներից կ'յիշեմ խողերին, դաշտի մներին, խուրդներին, աղուեսներին և նմանապէս կատուներին, շներին և ոչխարներին: Խողերը փորում են գետինը և ուտում են մորեխների ձուերը: Այն տեղերում, ուր շատ խողեր կան, բաց են թողում նրանց մանգալ դաշտերի վրայ և ուտել մորեխների ձուերը: Այդ գործում մարդոց շատ են օգնում ընտանի թռչունները, որ նմանապէս մէծ ագահ չութեամբ ուտում են մորեխներին: Խլուրդները, ինչպէս յայտնի է մեզ ապրում են գետնի տակ են զնում, հետեւաբար այդ ձուերը խլուրդների կերակուր են դառնում: Բայց իսկական թշնամիներից մորեխին ամէնից շատ են վնասում կարմիր և հասարակ սարեակները,—Pastor roseus L. որ միշտ գալիս են մորեխի եռեւից:—Մինչ անգամ կարել է հաստատ ասել որ եթէ բազմաթիւ սարեակների գունդ երեսց՝ պէտք է մորեխն էլ շուտ երեայ: Սրանք ուտում են մորեխներին և այնքան չեն ուտում ինչքան սպանում են նրանց: Բացի սարեակներից մորեխին փչացնում են, սպիտակ տառեղները, կռունկները, աղուաւները և այլն: Խողուններից գորտը շատ է փչացնում մորեխին: Նրբ մորեխը մէկ ափից անցնում է միւս ափը՝ ձկնելն էլ են նրան կուլ տալիս: Մորեխ-

Ների այս բնական թշնամիների մասին խօսեցի այն պատճառ-  
ութ, որ երբ մորելսը երեւայ, երբէք չը պէտք է նրանց,  
այսինքն վերև յիշած էակներին, սպանել. որովհետև նրանք  
օգնում են մալոդուն պատերազմել այն տարսափելի թշնամու-  
հետ: Հարկաւոր է նմանսապես աւելացնել որ երբէք չը պէտք է  
բոլոր մեր յայսը դնել մորելսի թշնամիների վրայ. դրանք կա-  
րող են միայն օգնել այս գործում: — Էլի կըրկինում եմ՝ որ տմէ  
սից լաւ միջոցը ձուերի հաւաքելի է:

1880 Ե. մարտի 23

## ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ՏԵՂ-ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



Այս օրերս գուրս եկաւ մամուլի տակից և  
ծախվում է Թիֆլիսի բոլոր գրավաճառների  
մոտ Ընկերութեան տպագրութիւնը.

№ 4. Թուվմատ եղբօր տնակը, (Վահէք) Ալու

Փոխ. Երեխաների համար Տ. Պալմէր, Թարգ. օր. Ն. Տէր-  
Մարկոսեանցի:

Պատկերազարդ և կազմաձ . . . . .	60 կ.
» անկազմ . . . . .	45 կ.

Ծախվում են նոյնպէս առաջուայ հրատարակութիւններից  
Հետևեալները.

№ 1. Թաւամազ մեղու (Աւենարիուսի), Թարգ. օր. Տէր-  
Մարկոսեանցի:

Պատկերազարդ և կազմաձ . . . . .	40 կ.
--------------------------------	-------

№ 2. Կարմիր լապտեր (Վուչէտիչէ), Թարգ. օր. Տէր-Մար-  
կոսեանցի:

Պատկերազարդ և կազմաձ . . . . .	50 կ.
» անկազմ . . . . .	30 կ.

№ 3. Մանկական երգեր. Գամառ-Քաթիստայի, կազմ. 25 կ.  
անկազմ. 15 կ.

Վերոյիշեալ զրքերը գնել ցանկացողները կարող են գի-  
մել նոյնպէս ուղղակի Ընկերութեանը՝ Հետևեալ հասցեով. Յն-  
Տիֆլիսъ, Тифлисское общество изданія армянскихъ  
книгъ.

մ ընթառ պատճեան ապի սպառ սղմո ալ կ  
զգմւուածախայր զայոց փայքիչի և նուխուն  
զմաժինառջրաբու մամնյուղմիւ առ

առօս (զնունք), պիտմա զօդրմ ամեխոնի .ք թ

• 08 . . . . . Տակը և բարսադիտոթ

Հայաստան Արքական

զիշման աջնայի աղաղական լուրջա ուս սիրուց մն և ախտա՛  
ու պահանձան աղաղական լուրջա ուս սիրուց մն և ախտա՛

Համերավ և բղարտղմնառը

Հանոսի Ա պատրի միասը

108 *Journal of the American Mathematical Society*

158 Հայոց Աստվածաբանութեա ամենաշատ աժառանքական Ա. Տ. Ա.

• ४ ग्रन्थ संस्कृतम्

The other, *Thymelicus sphaeroides*, occurs in the same regions as *T. lineola*.

7484

2013

«Ազգային գրադարան»



NL0079211

